ՍԱՐԴԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ ՀԵԿՏՈՐԻ

Հեռ.: (+374) 96 96 11 66 E-mail: ksardaryan@mail.ru
Հասցե: 7/1, Ադոնցի փող., ք. Երևան, 0014, ՀՀ

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի անդամի թեկնածու

Կարեն Հեկտորի Սարդարյանը ծնվել է 1974թ. հոկտեմբերի 7-ին՝ Երևան քաղաքում:

1996թ-ին ավարտվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

1997թ-ին անցել է որակավորման բարձրացում՝ ՌԴ դատախազության Տվերի տարածաշրջանային ուսումնական կեն

+տրոնում:

1997-2000թթ. աշխատել է ՌԴ Մոսկվա քաղաքի Մոսկվայի-Յարոսլավլի տրանսպորտային դատախազությունում:

2001-2006թթ. զբաղեցրել է Երևանի քաղաքապետարանի իրավաբանական վարչության պետի տեղակալի պաշտոնը:

2001-2005թթ. հանդիսացել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ:

2005թ-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2002-2007թթ. դասավանդել է Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

2005-2015թթ. հանդիսացել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ:

2006-2012թթ. հանդիսացել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան:

2012-2013թթ. Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտական քարտուղար:

2013-2015թթ. հանդիսացել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ:

2017թ. դասավանդում է Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանյան մասնաճյուղում:

Վարում է վերապատրաստման դասընթացներ ՀՀ փաստաբանների պալատում:

Ավելի քան 20 գիտական աշխատությունների հեղինակ, ՀՀ ԲՈՀ-ին կից Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում գործող «Իրավագիտություն» մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդի անդամ:

ՀՀ փաստաբանների պալատի անդամ, «Կոնսիգլերի» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ի հիմնադիր, տնօրեն: